ՉՊԵՏՔ Է ԼՌԻ ԽՈՀԵՄՈՒԹՅՈՒՆԸ...

Այն կայծը, որ մի քանի օր առաջ արծարծվել էր Կրկժանում, անսպասելի բորբոքվեց: Նյութը դյուրավառ էր, իսկույն բռնկվեց և իր շիթերը նետեց այլ բնակավայրեր: Ստեփանակերտից Քռասնի գնալու համար պետք է անցնել Մալիբեկլու ադրբեջանական գյուղի մոտով, և հիմա արդեն մալիբեկլուեցիներն են որոշում, թե Քռասնի գնացողին, Հարավ գնացողին, Ննգի, Մարտունի գնացողներին գնալու իրավունք շնորհել, թե զրկել այդ շնորհից: Այսօր պրոբլեմ է դարձել Շուշիից Աղդամ գնալը: Այսօր մարզի տարածքում ավտոերթևեկությունը հղի է վտանգներով: Տագնապալից է վիճակը մարզում:

Այս ի՞նչ է, անիշխանության շրջա՞ն ենք թևակոխել, չկա՞ օրինականություն, չկա՞ն օրինականության պահպան ուժեր: Էլ ո՞ւր մնացին հատուկ դրության ժամանակ գործող օրենքները, ինչի՞ համար է հատուկ ուժերի ներկայությունը մարզում, երբ խստագույն անողոքությամբ չեն բեկանվում հակահասարակական խժդժությունները:

Շարունակում է գործել այն սինդրոմը, որ եթե կատարվել է հակահասարակական, հակապետական գործողություն, ապա կարելի է դիմել արդեն բազմիցս չարչրկված միջոցին՝ հակադիր ուժերի մեջ փնտրել հավասար չափի մեղավորներ ու մեղավորություններ: Որպեսզի ոչ այս կողմը իրեն տուժած զգա և ոչ էլ մյուս կողմը: Մի՞թե անցած 17 ամիսների փորձը չապացուցեց այն պարզ ճշմարտությունը, որ հանցագործը պետք է մերկացվի և պատժվի անկախ ազգային պատկանելությունից, անկախ ամեն տեսակի ցեղից:

Երբեք մարզում այսպիսի անկառավարելի վիճակ չէր ստեղծվել: Ինչո՞ւմն է խնդիրը, որտե՞ղ պետք է փնտրել պատճառները: Վերադառնանք անցյալ ամիսներին. բացահայտ մի երևույթ, որ համառորեն չէր նկատվում ու քաղաքական գնահատական տրվում, շարունակում է անվրեպ գործել: Անպատժելիության սինդրոմը: Հիշենք, թե քանի՜-քանի ավտոբուս է ջարդվել, քանի՜ մարդ է հաշմվել ու նույնիսկ զոհվել:

Այդ հանցագործություններից քանի՞սն են բացահայտվել ու դատապարտվել, իրավապահպան մարմինները, և, մասնավորապես, մարզի դատախազությունը և մյուս իրավապահպան ուժերը ինչպիսի՞ աշխատանք են տարել հանցագործներին բացահայտելու համար: Այդ մասին ի՞նչ գիտի բնակչությունը և առաջին հերթին նրանք, ովքեր այսօր բացահայտ հանդես են գալիս ազգամիջյան հարաբերությունները սրելու միտումներով, դույզն անգամ չմտածելով, որ կարող են պատասխանատվության ենթարկվել: Զարմանքից մնում ես շվարած. Կրկժան թաղամասի ադրբեջանցի բնակիչները իրավունք չեն տալիս, որ հայ բնակիչները օգտվեն թաղամասի միակ աղբյուրից: Օրը ցերեկով, ափաշկարա: Անպատիժ: Ներքին գործերի մարզային վարչությունը, մարզային դատախազությունը, ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության հատուկ կոնտինգենտը և, վերջապես, հատուկ շրջանի պարետության ենթակա ուժերը կարկամում են մի քանի ազգամետ խուլիգանների հանդեպ: Իսկ գուցե ծառի ետևում անտա՞ռ է նկատվում...

Սկսվել է անօրինականությունների շղթայական ռեակցիա. ի պատասխան՝ ստեփանակերտցիները Շուշի-Աղդամ ճանապարհը փակում են, ի պատասխան՝ Ղուշչուլար և Շոշ գյուղերի ընդհարումը, ի պատասխան՝ 86-րդ կիլոմետրի վրա խանութի ջարդը խոջալուեցիների կողմից, ի պատասխան՝ ստեփանակերտցիների և զինվորների միջև դատապարտելի միջադեպը, ի պատասխան՝ մարդկային զոհեր: Այսօրվա թվարկածին վաղը չե՞ն ավելանա նոր օրինակներ:

Հանցագործին բռնելու և արժանի պատիժ տալու համար չպետք է ոչ մի քաղաքականություն մեջ բերել: Օրենքի խախտումը պետք է գնահատվի որպես օրենքի խախտում: Մինչդեռ մարզի բարձր ինստանցիաներում, հետևելով երկրում շրջագայող մի մտայնության, որոնում են իմաստուն հավասարակշռություն, գտնելով, որ ազգային նկատառումները պետք է հանգեն ինչ-որ պարիտետի: Այս ի՞նչ վերին մի նպատակ է, որ չենք կարողանում ըմբռնել, հասկանալ: Արդեն որերորդ անգամ է կրկնվում նույն գործողությունը. բավական է, որ նկատվի ղարաբաղյան խնդրի կոնստրուկտիվ լուծման հեռանկար, բավական է, որ մարզի քաղաքական ու տնտեսական կյանքում տեղի ունենան դրական տեղաշարժեր, անսպասելի կերպով ծագում են կոնֆլիկտներ, որոնք սրում են իրադրությունը, և որոնց կարգավորման համար անհրաժեշտ է լինում ամիսներ ծախսել, ձեռնարկել արտակարգ միջոցներ: Մեր հիշողության մեջ դեռ թարմ են Խոջալուի դեպքերը, որոնց հետևեց մարզում հատուկ դրություն մտցնելու որոշումը:

Հուլիսի 12-ից Երևանից հեռուստատեսային հաղորդումները չտրվեցին մարզում, որովհետև Շուշիում տեղադրված վերահաղորդիչ կայանքի աշխատողները այդպես ցանկացան: Դա առաջին անգամը չէ և երևի վերջին անգամը չի լինելու, որովհետև եթերային խուլիգանները շարունակում են անպատիժ մնալ, որովհետև մարզի գերագույն իշխանությունները, որոնք պարտավոր էին վճռականորեն միջամտել ու պատժել մեղավորներին, զբաղված են փաստի արձանագրությամբ միայն:

Այսպե՞ս չի ծնվել Թոփխանա-Խաչին տափի շուրջ ստեղծված աղմուկ աղաղակը, որը որպես դոպինգ մատուցվեց Բաքվի ընդարձակ հրապարակում հուռներում հավաքված տասնյակ հազարավոր մարդկանց:

...Ո՞ւմ է ձեռնտու մարզում քաղաքական դրության սրումը՝ այս հարցը պետք է տանք բոլորս միասին և յուրաքանչյուրս ինքն իրեն: Միասնական ուժերով, օրինականության սահմաններում պաշտպանենք մեր իրավունքները և իրավունքներից գլխավորը՝ Արցախի հայ բնակչության ազգային ինքնորոշումը: Այս հարցը բարձրացնելու համար թույլ տվեք որևէ ընդդիմախոսից թույլտվություն չխնդրել և թող ոչ ոք իրեն սյուզերեն լիազորություններ չվերապահի, սպառնալով Աղդամ-Սումգայիթ-Կիրովաբադ ֆորմուլայով: «Արցախի հայ բնակչությունը ինքն է իրեն լիազորում իր ազգային խնդիրները ներկայացնելու երկրի բարձրագույն ատյաններին:

Ովքեր լավ չեն ուսումնասիրել Արցախի պատմությունը, թող ծանոթանան ու սխալ նկրտումներով իրենց չխաբեն: Սահմանադրական իրավունքների պայմաններում, օրինականության հովանավորությամբ, լենինյան ազգային ինքնորոշման իրավունքի պաշտպանությամբ մենք բարձրացրել ենք մեր պահանջը և որևէ ուժի հանդեպ չերկնչելու մեր հետևողականությամբ, կորուստների և գերմարդկային զրկանքների ու լարումների ուժերով գնում ենք դեպի մեր նպատակը:

Սակայն դառնանք օրվա հրատապությանը: Նորից ինքներս մեզ հարց տանք. մի՞թե իրոք հնարավոր չէր կանխել այս վերջին առճակատումը: Մարենք մեր բորբոքված կրքերը, հեռու վանենք ազգային թշնամանքի ստորակա բնազդները, բորբոքենք մեր քաղաքացիական, մարդկային պարտք ու պարտականության զգացմունքները և որոշենք, թե ինչու առաջին հայացքից աչքի զարնվող որոշակի բաներ չեն նկատվում ու չեն արվում: Մի՞թե հնարավոր չի եղել, մեր պապերի օրինակով, պատվավոր մի պատվիրակություն ուղարկել Կրկժան ու լուծել արդեն պրոբլեմ դարձած ջրի հարցը, դրկից հարևանությամբ ապրող հայերի և ադրբեջանցիների միջև կարգավորել դրացիական հարաբերությունները: Ավաղ, այս անգամ մի կաթիլ մեղրից՝ չէ, մի կաթիլ ջրից սկսվեց ազգային խառնակությունը:

Ինչո՞ւ քաղաքի մի որևէ բարձր ինստանցիա հանդես չեկավ այդպիսի մի նախաձեռնությամբ: Քանի՞ անգամ կարելի է որևէ հարցի լուծմանը ձեռնամուխ լինել, երբ այն խճճվել ու ծայրահեղ բարդացել է արդեն:

Շուտով Ստեփանակերտ կժամանի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը: Ազգային կրքերի շիկացումը, ազգամիջյան հարաբերությունների ծայրահեղ սրումը, այդ հողի վրա խժդուժ արարքները, ընդհուպ մինչև մասսայական իրարանցումներն ու հրազենի օգտագործումը ստեղծում են այնպիսի իրադրություն, որը բացառում է հանձնաժողովի նորմալ աշխատանքը կամ նրա ժամանումը:

Դիմելով մարզի հայ բնակչությանը, մենք հարց ենք տալիս. մի՞թե դուք հանձնաժողովից սպասելիք չունեք, մի՞թե դուք չեք ցանկանում, որ մեր պահանջը արդար լուծում ստանա: Արդյո՞ք մենք մեր օրինազանց արարքներով ջուր չենք լցնում մեր ընդդիմախոսների ջրաղացը: Բայց դրա հետ մեկտեղ իրավապահպան մարմիններից և ոչ միայն նրանցից, վճռականորեն պահանջենք, որ վերջ դրվեն հակահասարակական և հակամարդկային խժդժություններին:

Սթափվենք ու սթափ նայենք այն իրադարձություններին, որոնք մեր շուրջը և մեզնից հեռու տեղի են ունենում: Մենք ապրելու ենք այս հողի վրա: Մենք այս հողի տերն ու տնօրենն ենք: Ինչ էլ անեն զիաբունյաթովներն ու անարները, քարավանը անցնելու է իր ճանապարհը: Այդ ճանապարհը ժամանակն է, տեղը՝ մեր Արցախ աշխարհն է:

Այս խառն ու խռով ժամանակներում, երբ քաղաքական վիճակը ծայրահեղ սրվել է, երբ մարդկանց նյարդային լարվածությունը հասել է բարձրակետի և անխոհեմ քայլ անելու հնարավորությունը մեծացել է անասելի չափով,—ստեղծված ճգնաժամային վիճակից դուրս գալու գլխավոր միջոցը այն է, որ դադարեցվի գործադուլը: Ահա այս կոչով դիմում ենք ձեզ, և առաջին հերթին ձեզ, ստեփանակերտցիներ, որ դադարեցնեք գործադուլը և գնաք աշխատանքի: Այո, այսօր մարզում ստեղծված քաղաքական լարված վիճակից դուրս գալու գլխավոր պայմաններից մեկը աշխատանքի դուրս գալն է: Գնանք աշխատանքի և հետևենք, թե ինչպես է աշխատելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը, ինչ որոշում է կայացնելու ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը: Ձայն բազմաց՝ ձայն արդարության: Հուսանք, որ այդ ձայնին ունկնդիր կլինի հանձնաժողովը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը:

Կրկին դիմելով Արցախի հայ բնակչությանը, ասում ենք, որպեսզի լուծում ստանա մեր ազգային պահանջը, պետք է խոհեմությունը իշխի մեր մտքերին, պետք է բացառենք որևէ անզգույշ քայլ, պահպանենք բարոյական մեր բարձր նկարագիրը:

Հուսանք, որ շուտով խաղաղություն կիջնի Արցախի հինավուրց հողին:

Վերջապես պե՛տք է որ լինի:

ԽՄԲԿՈԼԵԳԻԱ